

Մամլո հաղորդագրություն

մարտի 1, 2022

ՔՈԱՖ-ն ու ՀՀ-ում ճապոնիայի դեսպանատունը որակապես նոր հասարակական տրանսպորտ են բերում Լոռու մարզ


ԵՐԵՎԱՆ — 2022թ. մարտի 1-ին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) և ՀՀ-ում ճապոնիայի դեսպանատունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում ստորագրեցին «Լոռու մարզի հասարակական տրանսպորտի համար ավտոբուսի տրամադրման» դրամաշնորհային ծրագրի համաձայնագիր: Համաձայնագրով ճապոնիայի դեսպանատունը տրամադրում է ավելի քան 90.000 ԱՄՆ դոլար Լոռու մարզի հասարակական տրանսպորտի ցանցի բարելավման նպատակով, որը ենթադրում է նոր, հաշմանդություն ունեցող անձանց հարմարեցված ավտոբուսի գնում, տրանսպորտային ցանցի ընդլայնում և ենթակառուցվածքների բարեկարգում:

Համաձայնագրի ստորագրման արարողությունը մեկնարկեց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գևել Սանոսյանի, ՀՀ-ում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուչիմա Մասանորիի, ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կոբյուն Խաչատուրյանի բացման ու ողջույնի խոսքերով:

Հասարակական տրանսպորտը Լոռու մարզում՝ մասնավորապես Դսեղից դեպի Վանաձոր, խիստ թերզարգացած է. գործում է ընդամենը մեկ հեծուկ ավտոբուս, որը օրական միայն մեկ անգամ Դսեղից դեպի մարզկենտրոն Վանաձոր է ուղևորվում՝ առանց ճանապարհին գտնվող այլ գյուղական բնակավայրեր մտնելու: Վարորդի նախաձեռնությամբ փոփոխված ավտոբուսի և այս դրամաշնորհային ծրագրով ձեռքբերվող ևս մեկ արդի ավտոբուսի ներդրմամբ հասարակական տրանսպորտի վիճակը զգալիորեն կբարելավվի՝ բնակիչներին առաջարկելով պահանջված ու արդյունավետ երթուղի, որ կոնկրետ ժամային ինտերվալներով իրար կկապի Դսեղ-Վանաձոր երթուղու վրա գտնվող 7 գյուղական բնակավայրեր՝ ներառելով կանգառներ Դեբետում, որտեղ գտնվում ՔՈԱՖ ՍՄԱԲ կենտրոնը, և Դսեղում կառուցվող ՍՄԱԲ առողջության կենտրոնի մոտ:



CHILDREN
OF ARMENIA
FUND



From
the People of Japan

Հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման արդյունքն ավելին է, քան միայն մարդկանց տեղաշարժման հնարավորությունների ընդլայնումը. նոր ավտոբուսը հասարակական տրանսպորտը մատչելի կդարձնի հաշմանդամություն ունեցող անձանց համար, գյուղերի բնակիչներին նոր շուկաներ մուտք գործելու հնարավորություն կտա, ինչպես նաև կկրճատի անձնական մեքենաների կիրառման քանակը, ինչն էլ իր հերթին երթևեկությունը կդարձնի ավելի ապահով, մատչելի՝ նվազեցնելով նաև շրջակա միջավայրին հասցվող վնասը: Եվ, իհարկե, ինչպես և ՔՈԱՖ-ի մնացած նախաձեռնությունները, այս ծրագիրը ևս իրականացվում է՝ հաշվի առնելով համայնքի կարիքներն ու շահերը, սերտ համագործակցելով Փամբակ խոշորացված համայնքի, ինչպես նաև համապատասխան համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ ՅՈԱԿ-ի հետ:

Չարգացած տրանսպորտային համակարգը ենթադրում է նաև զարգացած տրանսպորտային ենթակառուցվածքներ՝ ներառելով կանգառները, չվացուցակի մասին տեղեկատվությունը: 2021թ. ՔՈԱՖ-ն այս ուղղությամբ արդեն քայլեր ձեռնարկել էր առաջին ՍՄԱՐԹ գյուղում՝ Դեբետում, ավտոբուսի ժամանակակից կանգառի կառուցմամբ: Կանգառները կվերանորոգվեն նաև երթուղու մնացած գյուղական բնակավայրերում:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: